

Մարզային ծառայությունների «արտակարգ» համագործակցությունը սերտ է

Հոկտեմբերի 8-ին Կոտայքի մարզպետարանում անցկացվեց հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով: Մասնակցում էին մարզպետարանի աշխատակազմի վարչությունների ու բաժինների, փրկարար ծառայության, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության, ոստիկանության, շտապօգնության աշխատակիցներ, այլք:

Կոտայքի մարզային փրկարարական վարչության Ճգնաժամային կառավարման կենտրոնը կազմակերպեց բոլոր շահառու անձանց ազդարարում եւ հավաք, իսկ մարզպետի տեղակալ Վասակ Վարդանյանը ներկայացրեց իրավիճակը:

Միջոցառման շտաբային մասին հաջորդեց գործնականը: Հրազդանի հրշեջ-փրկարարական ջոկատը 3 տեղամասում անցկացրեց հրդեհաշիջման, փլատակներից եւ փլուզումից վնասված մեքենայում արգելափակված քաղաքացիների դուրսբերման, պարանների միջոցով կոտրվածք ունեցող տուժածների տարհանման աշխատանքներ:

ՃԿԿ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Նորիկ Ասրյանի խոսքով՝ ուսումնավարժությունը եւս մեկ անգամ ապացուցեց, որ փրկարարների եւ մարզային մյուս ծառայությունների համագործակցությունը բազմակողմանի է, հիմնված մարդկային կյանք փրկելու գաղափարի վրա:

Նյութի աղբյուրը՝ ՀՀ ԱԻՆ պաշտոնաթերթ

Անի Անտոնյան